

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 հունիսի 2011 թվականի N 785-Ն

ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՀԱՐԳՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՀԱՐԳԱԴՐՈՇՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Թանկարժեք մետաղների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 9-րդ մասի «ա» կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է:**

**(նախարարի փոփ. 19.05.16 N 520-Ն)**

1. Հաստատել թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշման գործունեության համար օգտագործվող սարքավորումների փորձաքննության իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության  
վարչապետ

S. Սարգսյան

2011 թ. հունիսի 15  
Երևան

Հավելված  
ՀՀ կառավարության 2011 թվականի  
հունիսի 10-ի N 785-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՀԱՐԳՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՀԱՐԳԱԴՐՈՇՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման ու հարգադրոշման գործունեության համար օգտագործվող սարքավորումների (այսուհետ՝ սարքավորումներ) փորձաքննության իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Սարքավորումների փորձաքննությունն անցկացնում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի «Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական գանձարան» գործակալությունը (այսուհետ՝ գործակալություն) դիմող իրավաբանական անձի (այսուհետ՝ կազմակերպություն) ներկայացուցչի, անհատ ձեռնարկատիրոջ կամ նրա ներկայացուցչի (ներկայացուցիչների) մասնակցությամբ:

**(2-րդ կետը խմբ. 25.09.14 N 1060-Ն)**

3. Սարքավորումների փորձաքննության աշխատանքներն իրականացվում են դիմումը գործակալություն մուտքագրվելու օրվան հաջորդող 23 աշխատանքային օրվա ընթացքում: Փորձաքննությունն անցկացվում է տնտեսավարող սուբյեկտի գործունեության իրականացման վայրում՝ նրա ղեկավարին կամ պաշտոնատար անձին փորձաքննության աշխատանքներն սկսելուց առնվազն 3 աշխատանքային օր առաջ տեղյակ պահելուց հետո:

**(3-րդ կետը փոփ. 25.09.14 N 1060-Ն)**

4. Սարքավորումների փորձաքննության համար կազմակերպությունը գործակալության ներկայացուցչին (ներկայացուցիչներին) է ներկայացնում տվյալ արտադրության համար անհրաժեշտ սարքավորումների տեխնիկական անձնագրերը, հարգորոշման ու հարգադրոշման տեխնոլոգիական գործընթացը հաստատող փաստաթղթերը, կարգազրեքը:

**(4-րդ կետը փոփ. 25.09.14 N 1060-Ն)**

5. Սարքավորումների փորձաքննության համար գործակալությունը, անհրաժեշտության դեպքում, կարող է հրավիրել համապատասխան մասնագետներ:

**(5-րդ կետը փոփ. 25.09.14 N 1060-Ն)**

6. Գործակալության ներկայացուցիչը (ներկայացուցիչները) և հրավիրված մասնագետները կարող են ուսումնասիրել սարքավորումներ, օժանդակ արտադրության միջոցներ և փաստաթղթեր:

**(6-րդ կետը փոփ. 25.09.14 N 1060-Ն)**

7. Սարքավորումների փորձաքննության եզրակացությունը՝ համաձայն ձևի, կազմում և ստորագրում է (են) գործակալության ներկայացուցիչը (ներկայացուցիչները) և հրավիրված մասնագետը (մասնագետները)՝ դրանց մասնակցության դեպքում: Սարքավորումների փորձաքննության եզրակացությունը կազմվում է 3 օրինակից, 2 օրինակը փորձաքննության ավարտից հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում հաստատվում է գործակալության պետի կողմից և տրամադրվում է տվյալ տնտեսավարող սուբյեկտին, իսկ մեկ օրինակը՝ գործակալությանը:

**(7-րդ կետը լրաց, փոփ. 25.09.14 N 1060-Ն)**

8. Փորձաքննությանը մասնակցած մասնագետներից որևէ մեկի հատուկ կարծիքի առկայության դեպքում այն հավելվածի տեսքով կցվում է սարքավորումների փորձաքննության եզրակացությանը:

9. Սարքավորումների փորձաքննության եզրակացությունը հաստատվում է գործակալության պետի կողմից՝ հետևյալ որոշումներից մեկի գրառմամբ՝

1) համապատասխանում է թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման ու հարգադրոշման գործունեության համար «Թանկարժեք մետաղների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի N 1916-Ն որոշմամբ սահմանված պահանջներին:

2) չի համապատասխանում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման ու հարգադրոշման գործունեության համար «Թանկարժեք մետաղների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի N 1916-Ն որոշմամբ սահմանված պահանջներին:

**(9-րդ կետը փոփ. 25.09.14 N 1060-Ն)**

10. Սարքավորումների փորձաքննության բացասական եզրակացության մեջ հստակ նշվում են այն սարքավորումների և տեխնոլոգիական գործընթացի անվանումները, որոնք չեն ապահովում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները՝ նշելով համապատասխան իրավական ակտի դրույթները: Անհամապատասխանությունների վերացման դեպքում փորձաքննությունը կատարվում է ընդհանուր սկզբունքներով:

11. Փորձագիտական եզրակացության հետ չհամաձայնելու դեպքում տվյալ կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը կարող է բողոքարկել վարչական կարգով՝ վերադատության սկզբունքով, ինչպես նաև դատական կարգով:

**(կարգը խմբ., փոփ., լրաց 25.09.14 N 1060-Ն)**

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար**

**Դ. Սարգսյան**

ՁԿ

Հաստատում եմ  
Հայաստանի Հանրապետության ֆինանսների  
նախարարության «Թանկարժեք մետաղների և  
թանկարժեք քարերի պետական գանձարան»  
գործակալության պետ

\_\_\_\_\_ 20 թ.

**ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

\_\_\_\_\_ 20 թ.

(պատվիրատուի անվանումը և գտնվելու վայրը)

Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման ու հարգադրոշման գործունեության համար  
օգտագործվող  
Սարքավորումների

**Փորձաքննության արդյունքները**

Կազմակերպության անվանումը

Սարքավորումները

(համապատասխանում են կամ չեն համապատասխանում)

«Թանկարժեք մետաղների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի N 1916-Ն որոշմամբ նշել հողվածները և մասերը)

**Փորձաքննության մասնակիցներ**

Գործակալության ներկայացուցիչ (ներկայացուցիչներ) \_\_\_\_\_ (պաշտոնը,

անունը, ազգանունը, ստորագրությունը)

Հրավիրված մասնագետներ \_\_\_\_\_

(պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը)

Կ.Տ.

*(ձևը փոփ. 25.09.14 N 1060-Ն)*

*(հավելվածը խմբ., փոփ., լրաց. 25.09.14 N 1060-Ն)*